



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 84

1 ՄԱՐՏ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԽՆԴՐԱՆՔ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՆԷ

Մեծարոյ հարֆ եւ եղբարֆ

Կը ծանուցանենք մեր սրտին ջերմագին բաղձանքները:

Ամէն կողմ ցրուած յայտարարութեանց շնորհիւ տեղեկացած ըլլալու է յարգոյ հասարակութիւնը թէ Պոլսոյ մէջ վաճառատուն մ'ալ հիմնած ենք, որով պիտի զբաղինք արտածմամբ եւ ներածմամբ. եւ ունինք ներկայիս բաւական պատրաստ ապրանք, իւզ եւ չոր պտուղ:

Ամենամեծ նպատակնիս է գոհացում տալ մեր գաւառի յարգոյ յաճախորդներուն եւ այսպէսով ստեղծել մեր շուրջը չոր-ջանակ մը սրտերու, որոնք կրնան իրարու օգնելով ապրիլ իբրեւ բրիտանեայ եղբայրներ. փորձը պիտի ցուցնէ ձեզ մեր պայմաններուն առաւելութիւնները:

Գործ ընել կը փափաքինք կարգ մը կարեւոր քաղաքներու հետ եւ այս նպատակաւ յայտարարութիւններ զրկած ենք անոնց, որոնց պատասխանին կը սպասենք:

Մեզ որ եւ է կերպով աջակցողներուն խորին շնորհակալութիւննիս կը յայտնենք եւ կը մնանք միշտ երախտապարտ,

Եղբայրասէր Ընկերութիւն
Ք Է Օ Ֆ Թ Է Ր Ե Ա Ն Ե Ղ Բ Ա Ր Ց

Կ. Պոլսոյ սնորհնութիւն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԷՄԷՐՃԵԱՆ

1913 Յունվար 25

Մահմուտ Փաշա Մեծ Երէջզ Խան
Թիւ 14, Կ. Պոլիս

1871

1. The first of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

2. The second of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

3. The third of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

4. The fourth of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

5. The fifth of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

6. The sixth of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

7. The seventh of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

8. The eighth of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

9. The ninth of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.

10. The tenth of the year was a very cold one, and the snow was very deep. The wind was very strong, and the weather was very stormy. The snow was very deep, and the wind was very strong. The weather was very stormy.



DERGOUNIDAS

Prestre Armenien condamné par le Grand Vesir Ali Pac'ia

Mourut Martyr le 5e. Novembre 1707

ՏԷՐ ԿՈՄԻՏՍՍ ՔԱՀԱՆԱՅ

Այի փաշա Մեծ Եպարֆուէն դատաւարտած

և անհատկուած 1707 Նոյեմբեր 5 ին



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի ① 1 Մարտ 1913 ① Թիւ 84

«Մերական Քմեմնայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Եսայիայի Անճաղանց Շաբարաքերքը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանայն աղիւնաւորութեան համա,
Մերական Հայրն որսացին կ'օրհնէ յիշեալ Շաբարաքերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարգ. ՄԼԻ՛ի թէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Բ. Թեղեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամարաւ:

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՅԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

Թ

ԱՆԹԱՌԱՄ ԲՐԱԲՈՂՆԸ

Շաբաթ օրը՝ որ էր 25 Հոկտ., Հայազգի
անզգամ, անգութ եւ վայրենասիրտ կարգ մը
քահանայներու եւ աշխարհիկ մարդիկներու
համար դժոխային վրէժխնդրութեան եւ նա-
խանձու յաղթութեան օր էր. իսկ Երանելի
Տէր Կոմիտաս քահանայի համար, մինչեւ
ցփերջ աշխարհի՛ անմուտց եւ անմահ մնացող
Կաթողի՛ հաւատոյ Ախոյեանի մը պսա-
կադրութեան օրն էր:

Սոյն օրը շատ ուշ լուսնցաւ. արեւը չէր
ուզէր սրտմտութեամբ փայլուն ճառագայթ-

ները արձակել Պաշտօն հորհրդին վրայ, երկ-
նից կամարին վրայ խիստ թանձր եւ չորեք-
պատիկ հաստ եւ սև թելերով հիւսուած ամ-
պեղէն վարագոյր մը քաշուած էր, կարծես ի
նչան սգոյ այն աստուածային իրաւանց դէմ
գործուած մեքենայութեանց վրայ. եւ այն
վարագոյրին տակ պատրաստուած էր բիւր
հրացեալ կայծակներու շանթերու մթերք մը
վայրկենապէս հուր եւ ծծումբ տեղացներով
յաճիւն դարձնելու աստուածային վրէժ լու-
ծելով այն ոտտանայարնակ սրտերէն որ կար-
ծրը ժայռերէն աւելի, զգայնութիւնը կոր-
սընցուցած պինկմոլութեամբ հանդարտ քնոյ
մէջ թաղուած էին մինչեւ առաւօտ: Այո՛,
թէ եւ ուշ լուսնցաւ, սակայն աղօտ կերպով.
եւ ամէն մարդ իւր գործին հետամուտ փո-
ղոցներու, մեծ պողոտաներու մէջ երթեկը
սկսած էր: Պաշտօնական շրջանակները սկը-
սած էին փոքր եւ երկրորդական պաշտօնեա-

ներու ձեռամբ պատրաստուել: Գուռ-Գաբուրի Պատրիարքարանի դահլիճը լի էր ստորին մարդոց խմբերով: պատուական, մաքուր անձնաւորութիւն մը չէր երեւար մէջերնին, առ հասարակ ամէնուն ալ աչքերուն առջեւ գորշ գոյնով մանեկաձե ուռեցքներ կ'երեւային ի նշան արեւցութենէն գոյացած ներքին գործիքներու ապականութեան:

Ասոնք նոր ոգեւորութեամբ մը բազմանշամ խումբ մը կազմելով յառաջանալ սկըսան զէպի Եպարքոսարան. ու հոն Տէր Կոմիտասը բանտէն հանելով տարին ներկայացուցին Դատաւորին: Եպարքոսը թէև Մօլլայի՝ արաբական տառերով գրուած մեծադիր պաշտօնական թուղթը իբրեւ վահան ձեռքը բռնած էր, սակայն սիրտը կը բազխէր մարդասպանի մը սրտին չափ և ճշմարտութեան հակառակ գործելուն վրայ խիղճ կ'ընէր և յիմարաբար տակաւին ձե կը փնտռէր զինք արդարացելու և կամ իրեն հետ այն արդարն ալ փրկելու: Ուստի անգամ մըն ալ խօսք ուղղեց Երանելոյն և ըսաւ. «Խնչու համար դու՝ Ազգիդ կրօնքը լքելով Ֆրանկաց կրօնքը կը դաւանիս և ժողովուրդն ալ առ այն կը հրապուրես» Երանելին պատասխանեց խոնարհութեամբ ու ըսաւ. «Ես որ քահանայ եմ, իմ պաշտօնս կը պահանջէ որ, նախ իմ անձս ուղիղ ճամբու մէջ գնեմ, և ապա աշխատիմ որ ժողովուրդն ալ նոյն ճամբէն քալէ. բաց ասկից, Աւետարանիս և իմ ուրիշ Դրոցս ընթերցումէն, Հայոց հաւատալիսցը մէջ սխալներ գտած ըլլալով, ճշմարիտ հաւատքը ընդգրկած եմ»: Այդ պատասխանէն Եպարքոսը ի բարկութիւն բրգելով, հրամայեց որ Տէր Կոմիտասը իւր միւս երկու ընկերներովը Բարմազ-Գաբուր առաջնորդուի և հոն գլուխին կտրուի: (Հայր Յակինդ. Բօնշարդ. գրած. նմկ. 26. Հոկտ. 1707:) Այն ատեն Երանելին Տէր Կոմիտաս հաստատուն և աներկիւղ ոճով մը ըսաւ. «Դու կրօնքի խնդրոյն համար զիս մահուան դատապարտելու իշխանութիւն չունիս, զի ես ձեր կրօնքէն չեմ. բայց և այնպէս քանի որ այսպէս կ'ուզես, զիտցած ըլլաս որ Դատաւորին Աստուծոյ ահեղ դատաստանին առ-

ջեւ իմ արիւնս քեզմէ պիտի պահանջեմ. վասն զի այժմ դու հոս դատաւոր ես. ո'չ թէ այն վերջին դատաստանին օրը»:

Եպարքոսը այս խօսքերէն սոսկաց ու խելագարի մը պէս կանգնելով ու լի բարկութեամբ Պատրիարքին դառնալով. «Անոր արիւնք քու վրագ ըլլայ, ո'չ թէ իմ» ըսաւ (Ֆէրեօլ Մարգէզ): Պատրիարքը իր արբանեակներով՝ միաբերան Աստուածասպան Հրէից պէս, «Անոր արիւնք թո'ղ մեր և մեր որդւոց վրայ ըլլայ, իսկ վարձքը քեզի ըլլայ» աղաղակեցին:

Եպարքոսը նստաւ իւր բազմոցին վրայ և գորովով մը Տէր Կոմիտասին վրայ ակնարկը դարձնելով ըսաւ. «Ասոնք քեռէ կը դանդաւորն որ իրենց կրօնքը լքելով ուրիշ կրօնք մը դաւանեն ես»: Երանելին՝ Եպարքոսին պատասխանեց ու ըսաւ «Եթէ անանկ է, այն երկու կրօնքներէն ո՞ր մէկը նախադասելի է»: Եպարքոսը՝ «Երկուքէն ալ կը խորշիմ»: «Ուրեմն», ըսաւ Երանելին, «Խնչ փոյթ է քեզ, որ ես այս, կամ այն կը դաւանիմ»:

Տէր Կոմիտասին այս խօսքը Եպարքոսին բերանը խցեց, և լուր ատենականները ափ ի բերան մնացին:

(Շարունակելի)

ՄԵՐ ՊԵՏԿԵՐԸ.—Այս անգամ մեր գրած Տէր Կոմիտասայ պատկերին վրայ կ'ուզենք երկու բառ զրուցել: Երբ Երանելոյն ծանօթ պատկերներուն մէջ ընտրանք մը ընել կը խորհէինք, յանկարծ յիշեցինք թէ նախորդ Կ. Պատրիարքին հետ օր մը Մեծ-Լոդոթէթ Արիթարիսի պէյի աջակցութիւն տուած ըլլալով Եէնի քէօյի իւր ամբարանոցը, իշխանը մեծ հաճոյքով ցոյց տուած էր մեզ իւր քանի մը հազար հատորներով ճօն մատենադարանը. և ապա խօսելով նաև Կոմիտասայ փայլին վրայ, միածալ հատոր մը բերաւ, որ հաւաքածոյ էր հոյակապ մարդոց հին նկարներուն. ասոր մէջ մեծաւ ուրախութեամբ և զարմացմամբ նկատեցինք Տէր Կոմիտասայ այդ պատկերը: զոր առաջին անգամ կը տեսնէինք, և մինչև ցայսօր ուրիշ տեղ չտեսանք, գոնէ ամբողջութեամբ: Եւ այս հազուագիւտ նկարը ձեռք բերելու համար, թաւապիտ Մեծ-Ժողովրդագիտ Փեր: Կղ: Վ: Մանուէլեանի բարեացակամ միջոցաւ՝ դիմեմ կատարեցինք առ յիշեալ Լոդոթէթ պէյն: որ ազնուաբար Վին տրամադրութեան տակ դրաւ իւր թանկագին հատորը. որմէ այդ պատկերը լուսանկարուելով, փո-

Ք Ա Ր Ո Ջ
ՅԻՍՈՒՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՑ ՎՐԱՅ

(Շար.)

բազրէլ տուինք զայն ալլեւեալ մեծութեամբ. ներկայ ճիշդ չափովն է: Այս պատկերը յերաւել շնորհաւորելի է. Երանելոյն սիրողաց համար: Որովհետեւ յայտնի է անոր հմուքիւնը, վաղեմի տորազներէն ու ձեւերէն. մանաւանդ ներքեւը գտնուող գաղղիերէն արձանագրութեան ուղղագրութեան հին ձեւէն. արդէն պատմական կերպով ալ ստորդ է թէ Ս. Նահատակին ճիշդ պատկերն է այն, գծուած ի կենդանութեան և նոյն իսկ իր նահատակութեան տարին, 1707ին. հետեւաբար նոյնպէս ճիշդ կը կարծենք Մեծ-Վեցիւր Զօրւոյու Ալի Բաշայի և հայ պատերազմին պատկերները: Ուստի կրնանք իրաւունք ունենալ ենթադրելու որ Յէիոլ դեսպանին կամ Յիսուսեան հարց ձեւքով գծել արուած ըլլայ գաղղիացի նշանաւոր մը: Փռնոյի սյդ նկարը յոյժ արուեստագիտական է միանգամայն. բարակ ու փափուկ գործ, կարի նուրբ գիմագիծերով՝ ճարտար կենդանագործի (portraitiste) վրձինէն ելած, և ներկայելով վառվռուն, վսեմօրէն եղբրեգական և հաւժու տեսարան մը: Սակայն ամէնէն աւելի հիանալի է Երանելոյն անձը. դէմքը գերբնական լուսով ճառագայթարձակ, կը ցոլայ անոր վրայ անհուն Սէրն, որ անսասան Հաւատքէն ու աներկբայ Յոյսէն կը ծնի. կեցած է հոն՝ կարծես կենդանի, ճշմարիտ քահանայ, խոստովանող, տնկողով վկայ՝ առաքելուր կոյնելով ունայնութիւնները. սերովբեական տեսիլք մըն է: Զգայալացունց է նաև Մեծ-Վեցիւրին դիրքը, հակապատկեր Տէր Կոմստասայ երկնապարգև հեղ և անվրդով հանդարտութեան. նա, Երանելոյն արեւան պահանջումի սպառնալիքին ներքեւ ցնցուած, ալեկոծուած, չափաւորուած, խղճի ահաւոր փոթորկումը կ'արտայայտէ վրդովեալ դէմքին վրայ, և այս սոսկալի, աղետալի պատասխանատուութիւնը իրմէն ի բաց մերժելու յետին ճիգով մը, Պիղատոսի անպատեհի սարսափներուն մատուցած, կը կանգնի ուժասպառ, տեսարանին հետեւը կանգնած Կոյնափաղէմ Զմիւռնացի Յովհ. Պատրիարքին ուղղելով շանթարձակ աչիւրը և սպառնալից աջը՝ անոր վրայ նետելով այս անմեղ արեան հեղման ոճիւրը. զո՛ւր ջանք... խեղդամահ եղաւ ինքն, և յանկարծամահ այդ աղետաբեր Պատրիարքը. այդ անմեղ արիւնը զարհուրելի կերպով վրէժ լուծեց չարերէն, ինչպէս կենաց կայլակ ու բարեխոս դարձաւ միամիտներուն ու բարիներուն, «Արիւն դուրս ի վերայ մեր եւ ի վերայ որդոց մերոց»:

ՄԱՆ. ԽՄԲԳՐ.

Ահա՛ կորանքները, որ կը կրէ Փրկիչը իր հոգեվարքին մէջ. բայց պէտք էր քաւել նաև ազօրինաւոր հաճոյքը. մեղաց երրորդ անկարգութիւնը. ուստի իր հոգւոյն բուն ցաւը՝ ի տես այն տանջանքին զոր Հայրը իրեն կը պատրաստէ, իր հոգեվարքին երրորդ պարագան է: Արդարեւ գիտենք ըստ բաւականի թէ վերահաս և անխուսափելի տանջանքի մը սպասումը, նոյն ինքն տանջանքէն աւելի դժնդակ է միշտ. և երկիւղը ցաւէն բիւր անգամ աւելի դառնակակիծ եղանակաւ կը մեռնէ: Արդ Հօր արդարութիւնը Փրկչին հոգւոյն որոշակի կը ներկայացնէ ինչին տեսարանը իր սարօքը. դատարանի գիշերը, թուքերը, ապտակները, խարազանները, այպանքները, մահաբեր փայտը. այս սոսկալի երեւոյթները զինք կանխաւ. կը խաչեն: Զարչարանաց ատեն, այս տանջանքները յաջորդաբար տեղի պիտի ունենան. միաժամանակ չափի ծաղրուի, ձաղկուի, փշով պսակուի, խոցուի, խաչուի. հոս ամէնը մշակաման տեղի կ'ունենան. այդ ամէն ցաւերը կը միանան, և իր հոգին համակ կ'ընկղմի վշտաց և դառնութեան ծովու մը խորքը: Գողգոթայի վրայ, բոլոր բնութիւնը տակն ու վրայ ըլլալով, իրեն պիտի կարեկցի. իր թշնամիներն իսկ զինք Որդի-Աստուծոյ պիտի դաւանին. հոս կը տառապի մթութեան և լուսութեան մէջ, և իր ամենասիրելի աշակերաններէն իսկ կը լքուի, կը թողուի:

Ուստի այս ամենատուրը հոգին չկրնալով այլ ևս զիմանալ իր ցաւերուն ծանրութեան, և միւս կողմանէ Աստուածային արդարութեան խստութեամբը մարմնոյ մէջ արգիլուած, մեռնելու աստիճան տրտում, և մեռնելու անկարող, իր վշտերուն վերջ տալու անգօր, և անոնց տոկալու անատակ. իր հոգեվարքին նուազանքներովն ու ցաւերովը կարծես կը կուռի մահուան և կեանքի:

դէմ. և արեան քրտինքը՝ որ գետինը կը հոսի, իր դժնդակ ճիգերուն դառնադառն արդիւնքն է. Եւ հոսէին ի նմանէ քսուցի իբրեւ զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ ի յերկիր: (Ղկս., ԻԲ. 44.) Հա՛յր արդար, արի՛ւն ալ պէտք էր Որդւոյդ այս ներքին պատարագին: Բաւական չէ՞ իր թշնամինքնուն թափելիքը. մի՛թէ պէտք է որ քու արդարութիւնդ, այսպէս ըսեմ, կանխա՞ւ թափուած տեսնէ զայն:

Ահա՛ Աստուած՝ որուն այնքան բարի ըլլալուն կը հաւատանք, մինչև ո՛ւր կը մղէ իր վրէժխնդրութիւնը, նոյն իսկ իր Որդւոյն դէմ, զոր մեր ոճիրներով բեռնաւորեալ կը տեսնէ: Այս բանս զրդելու է զմեզ խիստ ապաշխարանքները յանձն առնելու, և ապրելու՝ միայն մեր անցեալ կենաց խոտորումները քաւելու համար:

Եւ սակայն Յիսուսի չարչարանքները մեր անապաշխարութեան պատրուակ կ'ըլլան. կը համարինք թէ ինք մեզի համար ամէն բան կրած ըլլալով, մեզի այլ ևս ընելիք բան մը գրեթէ չէ թողուցեր. և թէ իր չարչարանքներէն մեզի մեծ օգուտ մը եղած չէր ըլլար եթէ հարկ ըլլար որ մենք ալ իրեն պէս նեղութիւն կրէինք: Փրկի՛չ իմ, դուն ուրեմն զմեզ զեղիս ու զգայամէր ըլլալու արտօնելո՞ւ համար այդպէս համակ նշաւակ եղած ես վըշտաց. քու ցաւերդ պիտի ըլլային ուրեմն ուրացո՞ւմ քու Վարդապետութեանդ, խաչդ՝ տնօրինու՞մ վշտակրական պատուէրներուդ, և ցաւագին մահդ՝ մեղմացո՞ւմ Աւետարանիդ:

Ի՛նչ, եղբայրնե՛ր, այն արժէքը, զոր իր արիւնը պարգեւեց մեր նեղութիւններուն, ինքնին անօգո՞ւտ պիտի ընէր զանոնք: Յիսուս մեզի համար ամէն բան կրեց, ստոյգ է, այսինքն թէ մենք ամէնքնիս ալ նեղութիւն կրելու դատապարտուած էինք. բայց եթէ ինք նեղութիւն չկրէր, մեր նեղութիւնները անընդունելի պիտի ըլլային: Ուստի, իր կեանքը նուիրելով, տրամադրեց Աստուծոյ արդարութիւնը ընդունելու մեր ապաշխարութեան գուղնաքեայ և չնչին զոհը. իր արեան արդիւնքը, միացնելով մեր ար-

տասութիւն ու խստամբերութիւնը իրեննեւրուն, անոնց տուած է Աստուծոյ վայել արժանիք մը: Յիսուսի՝ մարդկութեան համար և մարդկութեան տեղ մեռնելէն ի վեր մարդս կրնայ նեղութիւն կրել Աստուծոյ համար. մարդս այլևս Աստուծոյ անարժան չէ: Ահա՛ Յիսուսի արեան արժէքը. անդգամութիւն է՝ պնդել թէ իր խաչը զմեզ նեղութիւն կրելէ ազատեր է. ըստ որում ան միայն մեզի օգտակար ըրեր է մեր նեղութիւնները:

Սակայն մեր կեանքին ամենագեղեցիկ մասը աշխարհի և կիրքերու զոհելէ վերջ, ապաշխարութեան մէջ ամենաթեթեւ զոհութիւնը զմեզ կը խոռովէ. աշխարհի, հարստութեան, հաճոյքներու համար ամէն բան կրելէ յետոյ կը գանգատինք երբ հարկ ըլլայ Յիսուսի համար վայրկեան մը նեղութիւն կրել. իր լուծը ծանր կը գտնենք. մեր կիրքերը աշխատալի և տաժանելի էին. մեր առաքելութիւնը կ'ըլլայ անջան, անխլիրտ. և նոր կեանքի մը մէջ ինչ ինչ անկարգ և զուցէ այլ ևս մեզի չյարմարող ունակութիւններէ հրաժարած ըլլալուս դժուարութիւնը միայն կրելով, կը կարծենք թէ ամէն ինչ լմացած է, և թէ Տէրը աւելի բան մը չ'ուզեր: Ո՛րքան քիչ կը ճանչնանք Աստուծոյ արդարութիւնը, եղբայրնե՛ր. Չկայ բողոքիւն, կ'ըսէ Առաքեալը, առանց արեան հեղումի: (Եբր. Թ. 22.)

Ապաշխարութիւնը արիւնոտ զոհ մըն է. այսինքն թէ անոր ցաւերը ազդելու են նոյն իսկ ըմբոստ մարմնոյն վրայ. այսինքն թէ Աստուած չի հաշտուիր մեղաւորին հետ, բայց եթէ երբ քնիկայ իր զղջման ուժգնութենէն տխրապին հոգեվարքի մը մէջ իյնայ, և իր կիրքերը իսպառ ջախջախուին իր խոտամբերութեանց և ցաւերուն հարուածներուն տակ: Կ'երկրպագենք քեզի ուրեմն, Փրկի՛չ իմ, քու հոգեվարքիդ մէջ, իբրեւ ապաշխարողներու օրինակին. ահա՛ այն գինը որով հաշտուելու ենք Հօրդ հետ. ուրեմն իրաւունք ունէի ըսելու թէ Յիսուսի հոգեվարքը՝ արդարութեան լրում է իր Հօրը կողմանէ. քանի որ իրեն կրել կու տայ՝ այն բոլոր արհաւիրքները, ամօթը, և ցաւերը ու

րոնց արժանի է մեղքը . լայց իր մահը է նաև լրում չարութեան մարդոց կողմանէ , ինչ որ պիտի տեսնենք այս պատմութեան շարունակութեան մէջ :

Բ. Մ Ա Ս

Յիսուսի մահուամբ մարդոց չարութիւնը կը լրանայ այսօր երկու եղանակաւ . նախ՝ կը լրանայ, որովհետեւ կը հասնի իր գագաթնակէտին , և Հրեաները ամենամեծ ոճիրով իրենց Հայրերուն չափը կը լրացնեն . երկրորդ՝ կը լրանայ, որովհետեւ հոն կը գտնէ իր քաւութիւնը և դարմանը : Այս երկու լրումն է զոր հրեշտակը կանխաւ կը յայտնէր Դանիէլի Գրիստոսի մահը անոր նախագուշակելով . անօրէնութիւնը պիտի լրանայ , կ'ըսէր , զինքը մեղացեալներուն չարութեամբ : Ի կնիք լրացումէն (Դան . Թ . 14) . և մեղքը պիտի ջնջուի և պիտի մեռնի . Ի վախճանել մեղաց եւ ի ջնջել անիրաւութեանց (Անդ) : Այս Վարդապետութիւնը՝ այլ ևս դարմանք չ'առի ինչպէս Առաքելոյն մեղի սորվեցնելէն ի վեր՝ թէ Յիսուս մեղքով մեղքը դատապարտեց , և մարդոց ամենամեծ չարութիւնը՝ անոնց ամենամեծ ողորմութիւն ընելու գործածեց :

Արդ , կ'ըսեմ թէ՛ մարդոց չարութիւնը այսօր իր ամենաբարձր կէտին կը հասնի , ուր որ ալ նկատենք զայն , թէ՛ աշակերտներուն թուլութեան կամ զրոգանքին մէջ , որ Փրկիչը կ'ուրանան , կը ձգեն կ'երթան , թէ զինքը դատող քահանաներուն և վարդապետներուն չարամտութեան մէջ , թէ իր մեռնիլը պահանջող ժողովուրդին յեղեղուկ փոփոխամտութեան մէջ , թէ զինքը դատապարտող Պիղատոսի վատութեան մէջ , և թէ վերջապէս , զինքը խաչող դահիճներուն անգրթութեան մէջ : Շարունակե՛նք իր ցաւերուն պատմութիւնը , և նկատեցէ՛ք , եթէ կը հաճիք , ինծի հետ , այս բոլոր պարագաները :

Նախ , աշակերտներուն թուլութեան կամ զրոգանքին մէջ , որոնք զինքը կը մատնեն կամ կը թողուն կ'երթան : Յիսուս , կ'ըսէ Աւետարանը , այս հոգեվարժէն կ'ըլլով աշակերտներուն հետ խօսիլը լինցնելուն պէս , Ահա՛ Յուդա , քսաներկուհին մեկը , կ'երեւ-

նայ՝ ոուրով ու բիրով զինուած զինուորներու խումբի մը զլուխն անցած , որոնք Փրկիչը բռնելու կու գան քահանայապետներուն եւ ծերերուն կողմանէ (Մատթ . ԻԶ . 47) :

Ո՛վ կը հաւատար , եղբայրնե՛ր , որ Յիսուսի ընտրութեամբն իսկ առաքելութեան վսեմ աստիճանին բարձրացած աշակերտ մը , անոր ուղեւորութեանց ընկերը , անոր գաղտնիքներուն տեղեակ մտերիմը , ականատես վկան անոր անմեղութեան , սրբութեան և հրաշքներուն , մինչեւ այն առեւ անոր ընտանեկան վարմունքովը պատուուած , քիչ մը առաջ անոր մարմնովն ու արիւնովը կերակրուած անձ մը , երեւնար անոր դահիճներուն զլուխը անցած . և ինքնին յառաջ վարէր անոր մահուան ամբողջ ծրագիրը : Ի՛նչ տխրութիւն է Յիսուսի սրտին տեսնել՝ թէ իր մահը նիւթողներուն առաջնորդն է բարեկամ մը , առաքեալ մը , որուն պաշտօնն էր զինքը ամէն մարդոց ճանչցնել և պաշտել տալ , և մեռնիլ իրեն և իր վարդապետութեան համար : Ո՛հ , եղբայրնե՛ր , երբ մէկը անգամ մը , այս աշակերտին պէս , վարքի վերահորդութեամբ մը Յիսուսի յարելէ , աշխարհի զեղծումը և հաւատքի մեծ ճշմարտութիւնները ճանչնալէ յետոյ , դառնայ ըլլայ անոր պէս անհաւատարիմ : Այդ անհաւատարմութիւնը այլ ևս չափ և սահման չ'ունենար . ամէն բանի ձեռնհաս է այն՝ որ պարապի հաներ է զինք անկարգութենէ ազատող շնորհքը . առաքիլութեան աստիճանը , ուր մարդ կը գտնուէր , կ'ըլլայ չափը անդունդին , զոր կը փորէ իր վերանկումով . և ամէն ծայրայեղութիւններ կը սպասուին անոնցմէ , որ , Աստուծոյ ճամբէն ժամանակ մը ընթանալէ վերջ , նորէն դէպ ի աշխարհ կը դառնան և դարձեալ Յիսուսի դէմ կ'ելլեն :

Դիտեցէ՛ք արդարեւ թէ՛ այդ անհաւատարիմ աշակերտը մինչեւ ու՛ր կը հասցնէ իր նենգութիւնը . իր Տէրը կալանաւորելու չի գար ճակատարաց . կը ծածկէ իր դիտաւորութեան ժանտութիւնը՝ բարեկամութեան ամենագոյար ցոյցներուն տակ . սրբապիղծ համբոյր մը կու տայ Յիսուսի . համբոյր մը , կ'ըսէ Ս . Լուան , որ ի խոր կը խոցէ իր

աստուածային Տիրոջ սիրտը, բիւր անգամ աւելի կսկծագին ցաւով քան զինուորին տէգը Գողգոթայի վրայ. խաղաղութեան ամենաքաղցր նշանը՝ ամենաստորին զաւազրութեան նշան կ'ընէ. կը յանդգնի մօտեցնել իր ամբարիշտ շրթունքները որ քիչ առաջ քահանաներուն ըսին. Լ'ընչ կ'ուզեմ ինձի տալ որ զինքը ձեզի մասնեմ, (Մատթ. ԻԶ. 15.) սրբազան շրթունքներուն անոր, որ իր բերնին շնչովը միայն կրնայ կայծակնահար չքացնել մեղաւորը. և հակառակ իր նենգութեան՝ անկէ լոկ խաղաղութեան և զթութեան խօսքերու արտաբերումը կը լսէ. տակաւին բարեկամի վարմունք ցոյց կը տրուի իրեն. Ընկե՛ր (Անդ. 50). իր գիտաւորութիւնը մոռնալ կ'ուզուի. Վասն որո՞յ եկիրդ. իբր իրեն հասկցնելու համար թէ դեռ ևս զղջալու ժամանակ կայ, և թէ տակաւին յուսալու տեղ ունի. Աշակե՛րտ դրութեան, ա՛յսքան Բարի Տիրոջ մը հանդէպ դեռ սիրտդ կտոր կտոր չըլլա՞ր, գութդ չի՞ շարժիր. կըրնա՞ս զիմանալ՝ անհաւատարիմ աշակերտնեւրուն վրայ ձգած այնքան բարեհաշման ակնարկներուն քաղցրութեան, իր անձին մեծվայելչութեան, իր դէմքին Աստուածային շքեղութեան, իր խօսքերուն անուշութեան, առանց ցաւէդ ոտքը իյնալու, առանց արցունքի հեղեղով իրմէ խնդրելու որ մոռնայ քու դրժանքդ:

Այս նուիրական հանդիսաւորութեան մէջ ո՛րչափները կը հետեւին անոր օրինակին. քանի՞ նենգաւորներ կան որ Յիսուսի սեղանին պիտի մօտենան զինքը մատնելու համակ տրամադրուած սիրտով մը. որ Ամենասուրբ Հաղորդութեամբ իրեն հաշտութեան համբոյր պիտի տան՝ միայն արտաքին երեւոյթները պահելու համար. այս պարտքը զանց ընելով՝ իրենց աստիճանին բերմամբ՝ մարդոց աչքին զայնող բան մը չընելու համար, լոկ պատշաճութեան համար, հանրութեան խօսակցութեան և անդրադարձութեան առիթ չտալու համար. ո՛րքան անարժան Բրիտանիաներ կան որոնց ևս պիտի ըսէ Տէրը, երբ սուրբ Սեղանին մօտենալնին տեսնէ. Նենգաւորներ համբոյրով կը մատնէք Մարդու Որդին. սի-

րոյս ամենաթանկագին նշանը ձեռք կ'առնուք ինձի նոր անարգանքնե՛ր հասցնելու համար. Հաւթուրելով մասնեմ զՈրդի Մարդոյ: (Ղկ. ԻԲ. 48):

(Շարունակելի)

ԲԲԹՕԼԵՍԹԱՆ ՄԷՄԱԼԻԲԻՆԵՆ

ԳԸՍՄԸ ԱԶԱՄԸՆՏԱ

ԳԱԹՕԼԻԷԼԻԹԵՆ ԹԵՐԱԳԳՐՍԸ

Ֆրիպուրկատ ինթիշար իտէն Լիպերքե կաղէթասը, ախիւրէն, Բրօթէսթան մէմալիքին Էքսէրիսինտէ Գաթօլիք մէզէպլիմի թերապը իթմէքտէ օլտուղընը չու սուրէթլէ թէպլիւր վէ թէլիսիա իտիյօրտը:

1800տէ Ալմանիատա 10,000,000 զատար Գաթօլիք պուլունտըղը հալտէ, 1903 սէնէսինտէ պու ատէտ 20,380.000է պալիլ օլմըլտըր: Հէր թարաֆտա, վէ իսուսուսըլա պէօլիք շէհիլլէրտէ եէնի եէնի Բիլիսալար ինչա իտիլմէքտէ վէ եէնի Ժողովրդապետութիւնլար թէէսիա օլունմապտա սըր: Պիր գաչ սէնէսէն պէրի Պէրլինտէ պունլարըն ատէտի շայանը հայրէթ պիւր տէրէճէտէ թէքէսսիւր իթմէքտէ տիր: Ալմանիանըն մէճլիսի միլլիսինտէ Գաթօլիքլէրին մէվլիի օլան Մէրքէզ (Centre) ատէթա թէսիլիի զայրը գապիլ պիր գալէ հիւքմիւնտէ տիր:

Հօլանտատա 1800տէ 300,000 Գաթօլիք օլուպ պունլարըն հիչ պիր Եպիսկոպոսը եօզ իքէն, 1907 սէնէսի թահրիբի նուֆուսընտա 1,822,000 Գաթօլիք, 1 Արքեպիսկոպոս, 4 Եպիսկոպոս, 3758 քահանայ վէ 18,825 կըրօնաւորա մալիք օլտուղը կէօրիւլմիշ տիր: 1852տէն 1871է գատար Բիլիսալար ինչալը իլիւն սարֆ իտիլէն մէպլաղ 120 միլիօն ֆըրանգա պալիլ օլմուշ տըր: 1904տէ Հօլանտա հիւքիւմէթինին 8 նաղըրլարընտան Յիւ Գաթօլիք իտի: Եինէ օ թարիստէ Գաթօլիքլէրին 25 մէպուսը, 18 այան աղատը, 42 եէվմի եախօս հաթթալըզ կաղէթալարը վէ 43 ըէսալլի մէվլութալարը վար իտի:

1800 սէնէսինտէ, Տանիմարգատա, Շուէտ-

տէ վէ Նօրվէճտէ սայքի հիշ Գաթօլիք Եօգ իքէն, պու կիւն, Տանիմարգատա 2940 Գաթօլիք վար վէ վասաթի պիր հիսապլա տա, սէնէտէ 30-40 քիշի Գաթօլիք օլմագտա տըր: Շուէտտէ 2800, Նօրվէճտէ 2500 Գաթօլիք վար վէ սէնէտէն սէնէյէ տէ 100 քիշի գատար Գաթօլիք մէզհէպինի գապուլ իտիյօրլար:

Ինկիլթէրրատա Գաթօլիքլիյէ տախիլ օլանլարըն նէ գատար չօգ օլտուղընը հէր քէս պիլիլ, պուռնուն պիր չօգ սէպէպլէրի վարսա տա, պաշլըճա սէպէպ շու տըր քի, Խնկիլթէրրա Բրօթէսթանլըլը, կէրէք քէնտի թալիմաթլարը վէ կէրէք սիլսիլէյի մէրաթիպիլ րուհանիյէսի իլէ Գաթօլիքլիյէ, նիսպէթէն, էն եապըն պուլընան Բրօթէսթանլըլ տըր:

Ինկիլթէրրա հիւքիւմէթինին ագսամընտան օլան Իրլանտա սայքի քեամիլէն Գաթօլիք տիր. մա մաֆիյ, Իրլանտա հիսապա տախիլ օլմագաղըն, 1800տէն 1907յէ գատար եալընը Ինկիլթէրրատա Գաթօլիքլէրին ատէտի 120,000տէն 2,180,000է եիւքսէլմիլ տիր: Պու կիւն Ինկիլթէրրատա 21 Եպիսկոպոս, 4160 քահանայ, 2071 Բիլիսամըզ վար տըր: Գաթօլիքլիյի գապուլ իտէնլէր, ումումիյէթլէ սընֆը րուհպանա վէ եիւքսէք թալիմ կէօրմիւլ օլան ճէմիյէթէ ալիտ օլուպ, պուռնլար պիր չօգ թէթէպպիւ վէ թէֆթիլտէն սօնրա գանաաթը վիճտանիլէ իլէ Գաթօլիք օլույօրլար: Շէօյլէ քի, 1899տան պէրի 546 պատուելի, 417 բարլամէնթօ աղասը, 205 պահրիյէ զապիթի, 162 էտիպ, 129 հուգուզլինաս, 60 տօզթօր վէ 66 տա աարըզատէկեան բրօթէսթանլըլտան Գաթօլիքլիյէ կէլմիլլէր տիր: Պու կիւն Իրլանտա տախիլի հիսապ օլարագ, Ինկիլթէրրալամէնթօսընտա 82 Գաթօլիք մէպուս, Լօրտլար գամէրասընտա 41 աղա վէ շուրայը Տէվլէթտէ տախի 20 միւշապիլի խասս պուլընմագտա տըր: Շու սօն 60 սէնէլէր սթաթիսթիքլէրինէ նազարէն, սէնէտէ վասաթի օլարագ 10,000 դարձ վազը օլմագտա տըր:

Շայէտ տէնիզլէր իւզէրլինտէն գաթը մէսաֆէ իտէրէք Աւսթրալիայա զիտէճէք օլուր

իսէք, շայանը հայրէթ թէրագգըյա թէսատիւֆ իտէճէյիզ: 1818տէ օրատա գաթօլիքլիք մէվճուտ տէյիլտի վէ հաթթա Ինկիլթէ հիւքիւմէթի գաթօլիքլիյին օրայա տուխուլինէ միւմանաաթ տա իտիյօրտըր: 1820տէ սէրպէսթիի էտեան իլան օլուռնտըղընտա, իքի Իրլանտալը միսիօնէրլէր օրայա կիթտիլէր վէ Գաթօլիքլիյի վազ իթտիլէր: Իշթէ, շու պիր ասրա գարիպ ղէման սօնրա, պու կիւն օրատա 1,600,000 Գաթօլիք վար վէ պուռնլարըն 3 Արքեպիսկոպոսլարը, 14 Եպիսկոպոսլարը, 1400 քահանալարը, 5500 կրօնաւորլարը վէ 35 տէ մէքթէպլէրի վար տըր:

Մէմալիքի միւճթէմիայը Ամէրիգատա 1808տէ 40,000 Գաթօլիք, 50 քահանայ վէ եալընըզ 1 Եպիսկոպոս մէվճուտ օլտըղը հալտէ, պու կիւն, 22,587.070 Գաթօլիք, ծնալթը պին պէշ եիւզ քահանայ, 1 Բարա վէքիլի, 3 Գարտինալ, 13 Արքեպիսկոպոս վէ 88 Եպիսկոպոս մէվճուտ տըր: Պու կիւն 13204 Գաթօլիք Բիլիսամը վար տըր քի, պուռնլարտան 366սը չըգան սէնէտէ եարըմըզ տըր:

Գաթօլիքլիյի գապուլ իտէնլէր լիսթասընտա պիր Բրօթէսթան եպիսկոպոսը, 327 Պատուելի, 3 Խախամ, 12 սարկաւագուհի վէ սայիթէ կէօրիւմէքտէ տիր:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Բ. Բարոյական

(Շաբ. եւ վերջ)

4. Որքան անպատու՞ ուրախութեամբ, նոյնքան խորին խոնարհութեամբ պէտք է սքանչանանք Մարգեղութեան Ս. Խորհրդոյն վրայ: Բանն Աստուած երկու ծնունդ ունի, երկուքն ալ հրաշալի, մին՝ ի յաւիտենից՝ ի ծոցոյ Հօրն Աստուծոյ, միւսը՝ ի ժամանակի մարմին եղեալ ի ծոցոյ Մօրն Մարիամու: Խոնարհեցաւ՝ ծառայի կերպարանքն առնելով, որպէս զի պատմէ մեզի Աստուծոյ գաղտնիքը ու փրկէ զմեզ: Ինքն իսկ է նսմարսուքիւն

անուշտ, և ճանապարհ ուղիղ և անկորուստ. իրմով է կեանք, որ յայտնեցու մեղ, որպէս զի առատապէս կեանք ունենանք, երանելի և անմահ. և այս կեանքը Լոյս է, որ ինքն իսկ է, որ զամէն մարդ կը լուսաւորէ, անաղօտ և աննիւազ. որպէս զի քաղինք այս լոյսին մէջ՝ քանի որ մեզի հետ ունինք զպիտիւր երկրորդ ծնունդն ալ՝ Մարդ-Աստուած Կուսածինն Յիսուս Քրիստոս, անքննական և անճառ է, որով և զաւուր թիւն և Փրկիչ, Քաջանայապետ և Զոհ, Տէր և Թագաւոր, անհունապէս բարի և գեղեցիկ անսանելով քան զամենայն ողորդ անողիկան. Այս խորհրդաժողովիւնն են որ ցնծալին գոչել տուին Մեծին Օգոստինոսի. «Ո՛վ երանելի յանցուած, որ արժանի գրեւեղաւ այսպիսի մեծ փրկչի մը»:

2. Երկինք յերկիր իջած էր, այն որբազան բնականին մէջ: «Եւ զայս՝ ո՛չ զի լսեցէ՛ք՝ ասեմք, այլ զի եւ արուքեան նոցա նմանող լինիցիմք, եւ համարձակութեան եւ բնաւ արդարութեան» (Ոսկ. ձ. Ե.): Համակ սրբութիւն և անվերջ օրինակ ամէն առաքելութիւններու: Հո՛ն Աստուծոյ որդին և թագաւորն թագաւորաց՝ իբրեւ որդի մարդոյ և ծառայ կը պատէ, խոնարհ ու հնազանդ. համբերելով ամէն տառապանաց: Մենք ալ, իր հաւատացեալ աշակերտները, պէտք է որ իրեն նմանինք, և անոր միջոցովը Աստուծոյ հետ հաշտ մնանք, Անոր Ս. Կամեց յանձնուած ամէն պատահարաց մէջ, պարծելով իսկ մեր նեղութեանցը վրայ: (Հմտ. Հռ. Ե. 4-14):— Այն Ս. ընտանիքին մէջ նշնապէս օրինակ են մեզ Մարիամ և Յովսէփ. Մարիամ Աստուածամայր, խոնարհ աղաթին և տանտիկին, կատարեալ համակամ և բոլոր հոգեբն Աստուծոյ յանձնող, մինչեւ իսկ իւր Աստուածային յղութիւնը կը լռէ Յովսէփայ, չուզելով Աստուծոյ գաղտնիքը յայտնել և Անոր պարգեւներուն վրայ պարծիլ և վատահելով Աստուծոյ ինտիմատութեան. իսկ Յովսէփ լռիկ մեջիկ կ'աշխատի ու կը ծառայէ. զինքն անարժան դատելով սոյնպիսի միջավայրի մը: Եւ կ'ըսեն շատ Ս. Հայրեր թէ անոր համար ուզեց արձակել զՄարիամ, որովհետեւ ինքը զինքը անարժան կը դատէր այնպիսի փառաւորեալ Կուսի մը կենակցութեանը: Եւ իր խոնարհ աղօթքին համար հրեշտակ զրկուեցաւ իրեն, «Ձոր օրինակ եւ Քրիստոս՝ յետոյ յանձն արար զվայրեն՝ աւակներին, նոյնպէս եւ աս Աստուած հրեշտակաւ՝ Յովսէփայ» (Ոսկ. Ի. Դ.): Քանզի հաւատաց իբրեւ Աբրահամ և համարեցաւ նմա յարգարութիւն: Հոն կատարեալ խաղաղութիւն և սէր, հոն խոնարհ յարգութիւն և ջերմեամբն Աստուածապաշտութիւն. հոն կանոնաւոր աշխատութիւն, ծանրաբարոյ խօսակցութիւն և արդիւնաւոր համբերութիւն. հոն երկնաւոր կենցաղաւորութիւն և անհատնում միմեկարարութիւն: Օրինակ կուսանոց և ամուսնացելոց. օրինակ ծնոցաց և որդւոց, օրինակ աղքատաց և մեծատուններու: Եւ Մարիամ եղաւ թագաւորի երկնից ու երկրի. և Յովսէփ՝ պաշտպան խորհրդական մարմնոյն Քրիստոսի՝ Ս.

Եկեղեցւոյ, Սիրենք և նմանինք իրենց, իրենց ամենահոգոր բարեխօսութեան ապաւինելով: Քանզի «Հայելի հոգեւոր է յիշատակն արանց առաքիներեաց, եւ երանելի կենացն նոցա պատմութիւն. եթէ միանգամ միայն կամիցիս հայել ընդ պաշկերս այնպիսի սրբոց, ե՛ւ զքա մեացդ զգեղութիւնն սեանիցես, ե՛ւ սեւեալ, ոչ եւս ունեմ պնտիւնեսեւ կաթո լինիցիս զերծուցանել զեզ ի յոռութենէ: Քանզի այնմ պիտանացու է մեզ հայելին, եւ դիւրին գործէ զփոփոխումն» (Ոսկ. ձ. Դ.):

3. Աւստի պէտք է ամէնքս ալ վերադառնանք ծնունդն ի Քրիստոս և զինքն զգենուր, զնոր մարդն, ի բաց մերկանալով հինը՝ իր բոլոր կրքերովը. Որդեգրուեցանք Աստուծոյ և ծառայող եղանք. սակայն պէտք է յիշենք թէ՛ «Մեծ պատիւ՝ այնցիկ որ ոչ քս արժանի պատուոյն կամիցին կալ, յաւելուած պատուոց է» (Ոսկ. ձ. Դ.): Հաւատացեալ ոչ թէ Աստուծոյ տուրքերովը միայն, այլ և իր գործակցութեամբը պիտի փրկուի. «Հաւատացելոյն ո՛չ միայն յորոց առն յԱստուծոյ, այլ եւ յորոց ինքն նպաստ եղեւ, պարս է պայծառանալ» (Ոսկ. ձ. Դ.). զի «Որ ստեղծն զեզ առանց բո, ո՛չ փրկեցէ զեզ առանց բո» (Ս. Օգ.): «Քանզի եւ Աստուած մեզ իսկ կամի զենոհան եւ ո՛չ այլոց վասն մեր» (Ոսկ. ձ. Ե.):

4. «ԱՍՏՈՒԱՅ ՄԵԶԻ ՀԵՏ» 1. Ո՛չ միայն էութեամբ, ներկայութեամբ և զօրութեամբ ինչպէս ամէն արարածներու հետ (Գործ ԺԷ. 27-28), այլ եւ իրապէս, մարմնաւորութեան իրաւոր մեզի. համացեղ, ազգակից, եղբայր, որ մեզի հետ ապրեցաւ, խօսեցաւ, տիրեց զմեզ և համա ձեռնութիւն տուինք իրմով. «Որով ապանւեան իսկ եղեաք, ընդ որ հայեցանք, եւ ձեռք մեր զօգտեցին ի վերայ բանին կենաց» (Ա. Յովհ. Ա. 4):— 2. Մեզի հետ է ինքը՝ իբրեւ Գլուխ Աբրահամ, որ կը վարէ իր անդամները, որ մենք ենք (Եփ. Ե. 2-30 Մատթ. ԺԸ. 20):— 3. Ս. Եկեղեցւոյ հետ է նա միշտ՝ իբրեւ փեսայ ընդ հարսին. (Աղ.՝ 25-27), որուն ընթերակայ է և ձեռնառ պաշտպան և վահան մարմնութեան, զօրավիզն օգնականութեան, ի մէջ մահու ստուերներուն, նա զայն կը փրկէ, կը զարդարէ, կը հարստացնէ՝ որդւովը բերկրեալ (Սղմ. ԻԲ. 4):— 4. Սակայն մանաւանդ նա մեզի հետ է, մինչեւ ի կատարած աշխարհի, ըստ իւր անուշտ խոստման, Ամենասուրբ Հաղորդութեան Խորհրդոյն մէջ, մեզի կենաց կցորդ, մտերիմ բարեկամ, երկնաւոր, հրաշալի կերակուր, կատարելապէս միացած մեզի հետ, յարգարելով զմեզ նաեւ «Տաճար եւ բնակարան Ամենասուրբ Երրորդութեան»: Էմմանուէլ: Տէր իմ եւ Աստուած իմ, ... Լե՛ր հանապազորդ ընդ իս, քս անուշտ խոսմանց քոց: Էմմանուէլ, երբ քեզ ահեղ մեծ վայելչութեանէդ սարսափող մարդկեղէն ողնջութիւնն և մեղաւորութիւնն դողալով գոչէ առ քեզ մեծ Առաքելապետին հետ. «Ի բաց զնա՝ յիմէն, Տէ՛ր, զի այր մեղաւոր եմ ես», Սէ՛ր անուշտ Յիսուս, խոնարհալով դէմքով ժպտէ՛ ինձի ալ ու միմեզ «Մը՛ր երկնից» (Ղուկ. Ե. 8-10):

5. «Զայն սիրէ ու հաստիս բարեկամ յրէ՛ քեզ՝ որ, երբ ամենք ի բաց մեկնին քեզմէ, զքեզ չսիսի թողու, եւ թոյլ չպիտի սայ որ կորուսիս»։ (ՆՃ. Քրիստոսի Գ. Բ. Գլ. Է.) «Բարեպաշտ մարդը ամեն սեղ իրեն հետ կը տանի իւր մխրթանիչն՝ Յիսուսը, ու կ'ըսէ անոր. Ընկերացի՛ր ինձի, Տէ՛ր Յիսուս, ամէն սեղ ու ամէն ժամանակ» (Անդ. Գ. Գ. Գլ. ԺԶ)։

6. Փրկիչն Յիսուս պիտի փրկէ զմեզ անպատճառ, եթէ սակայն մենք մեզի չխոտաճինք ու խնարճ ըլլանք։ «Ես խնարհ եղէ եւ Տէր կեցոյց զիս» (Աղմ. ՃԺԲ. 6.) «Զհոգի խնարճ Աստուած ոչ արժանարճէն» (Անդ. Թ. 49.) «Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր տանէ զտառապետս յաղբեւոց» (Անդ. ՃԺԲ. 7) «Եկա՛յք առ իս, ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ» (Մտթ. ԺԱ. 28)։ Մեղաւորը իւր խոտովանութեամբ կ'ալ դարձնայ. ո՛րչափ ևս առաւել եթէ արդարը զինք մեղաւոր համարի ու խնարհի։ «Զի թէ ի մեղաւորաց, արդարս առնէ խնամհեղին, ո՛րչափ եւս յարգարոց կասարեալ արդարս... Եթէ դու զանձն ի գովիցես, Աստուած զքեզ այնուհետեւ ոչ գովէ... Բանգի չկամի իսկ զվասակսն քո նուագեցուցանել... Զամենայն ինչ առնէ եւ հնարի, զի զքեզ եւ փոխուիմքն պսակեցէ. շուրջ զայ եւ պատճառս խնդրէ, թէ ի՛նչ կարողեց արեցուցանել զքեզ ի գեներէ։ Վասն այսորիկ եթէ ի մեղաւորներոց ժամէն վասակիցես, զողոյցն իսկ զաւուրն վաճառ սայ քեզ. եւ եթէ բնաւ իսկ չունիցիս պատճառս փրկութեան, առէ. Վասն ի՛մ առնեմ, զի մի՛ Սնուն իմ հայնդիսցի... Մի՛ այստեհեսեւ հպարտացուի, այլ կոչեսցուի զանձինս անպիտանս, զի լիցուի պիտանիս» (Ոսկ. Ճ. Գ.)։ «Քանզի յիս յուսացաւ, եւ փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զՍնուն իմ։ Կարգացէ առ իս, եւ ես յուայց նմա. եւ առ նմա եղէց ի նեղութեան. Փրկեցից եւ փառաւոր արտից զնա. երկայն աւուրբ լցուցից եւ ցուցից նմա ԶՓրկութիւնն իմ» (Աղմ. Գլ. 14-16)։

Գ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

«ՀՐԱՌԻՐ ՍԻՐՈՅ»

ՕՍՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆ

ԿԱԹՈՂԻԿՆՈՒԹԵԱՆ

ՍՈՒԼԹԱՆ, ՄԱՀՄԱՌԵՍԻ ՕՐՈՎ

Հայ-Կաթողիկէ հասարակութեան պատկանող որոշ դասակարգի մը կողմէ չուրջ երկու տարիէ ի վեր Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին իրաւանց դէմ կատարուող ամօթալի դէպքերուն տեսակ տեսակ անուններ արուեցան։ Սակայն այդ անուններէն և

ո՛չ մին ճիշդ ու պատշաճ էր պարագային. — եղածը միջավայրիս յարմարեցուած combisme մըն էր, կատարեալ հակակաթողիկէ պայքար, կիրարկուած ընկերվարական և յեղափոխական մեթօսներով։

Հայոց մէջ այս առաջին անգամը չէ որ հակակաթողիկէ պայքար կը մղուի. ժամանակին բերմամբ ձեւական տարբերութիւններ կան, բայց հիմը նոյնն է։ Քաղկեդոնի տիեզերական ժողովէն (451) ի վեր՝ որուն Հայերը պատերազմի պատճառով չկրցան մասնակցիլ, կը տեսնենք թէ միշտ Քաղկեդոնականի և հակաքաղկեդոնականի, միաբնութեանականի և երկբնութեանականի, Պապականի և տակաւին շատ մը ուրիշ յորջորջումներու տակ հակակաթողիկէ պայքար մը գոյութիւն ունեցած է զԺրախտարար։ Մեր Նախնեաց Մատենադարանէն մէջ բազում ապացոյցներ կան այս մասին։

Այս հակակաթողիկէ պայքարը ունեցած է նաեւ իր անխուսափելի հակազդեցութիւնը Հայոց քաղաքական և ընկերային վիճակին վրայ։

Պէտք է գիտնալ որ Կաթողիկէութիւնը Հայոց ընդհանուր շահերուն վնասակար չէ եղած երբեք և պիտի չըլլայ ասկէ վերջ ալ, պայմանաւ որ թոյլ տրուի որ ան ալ իր հօտին հոգեւոր գործով զբաղի անարգել իր դաւանական և բարեկարգական հիմնական կանոններուն համեմատ։ Զէ մոռցուած յուսամ Հասուն Կաթողիկոսի գուրգուրանքը Զէյթունի վրայ և Ալարեան Կաթողիկոսի սփոփարար ջանքերը Հայկական ջարդերու ատեն՝ որոնց չնորհիւ քանիններ ազատեցան ջարդուելէ և քանիններ բանտերու մէջ տըպէ։ Աւելի նոր օրինակ մըն ալ կայ զոր չի կրնար մոռնալ երախտագէտ Հայութիւնը, թէ եւ շատեր կ'աշխատին զայն մոռցնել տալ։ Կիլիկեան եղեռնին ժամանակ Ատանայի Եպիսկոպոս Տ. Պօղոս Գերապայծառ թերզեանի ճշմարտապէս հերոսական գործունէութիւնը ոսկիի տառերով գրուած պիտի մնայ Հայ մարտիրոսապրութեան պատմութեան մէջ։

Եթէ Հակակաթողիկէ անագնիւ պայքարը

գոյութիւնն չունենայ, Կաթողիկէ-Հայ Նուր-
բապետութեան պետերը կրնան գերազանցա-
պէս ազգասիրական և մարդասիրական գոր-
ծունէութիւն մը ունենալ և տառապեալ Հա-
յութեան ընդհանուր շահերու տեսակէտով
օգտակար ըլլալ:

Աւագ որ այս ճշմարտութիւնը հասկը-
ցողներ չկան . . .

* *

Օսմանեան տիրապետութեան տակ, Սուլ-
թան Մահմուտի օրով, Կաթողիկէութիւնը
մեղմու կը ծաւալէր Կ. Պոլսոյ Հայոց մէջ:
Զայս տեսելով ոչ-Կաթողիկէ ազգայինք իս-
պառ անհետացնելու համար Կաթողիկէ կը-
րօնքը Հայոց մէջէն ամէն տեսակ անպատ-
ուարեր միջոցներու զիմեցին: Երանելի Տէր
Կոմիտաս քահանայ Քէօմիւրճեանցի նահա-
տակուելէն (1707) մինչեւ Տիւզեան Կաթո-
ղիկէ ընտանիքին կոտորածը (1819) այնպիսի
ճգնաժամեր անցուցած է Կաթողիկէութիւնը
մահաւորապէս Կ. Պոլսոյ մէջ, որ հատոր-
ներ պէտք է մանրամասն նկարագրելու հա-
մար:

Լաւագոյն կը նկատեմ այս մասը աւելի
չերկարել և կ'անցնիմ «Հրաւէր Սիրոյ»ի:

1820 Յունուար 18/30ին Կայսր. հրովար-
տակ մը կը պարտադրէր Կ. Պոլսոյ Հայոց
Պատրիարք Անդրեանուպոլսեցի Պօղոս Արքե-
պիսկոսոսին վերջ մը տալ հակակաթողիկէ
պայքարին և այդ նպատակով բռնակցիլ Կա-
թողիկէ-Հայ հոգեւորականներու հետ: Յա-
րութիւն Ամիրա Պէղճեան, նոյն ժամանակի
ամէնէն նշանաւոր Հայը, հաճելի ըլլալու
համար Սուլթան Մահմուտի և կերպիւ իւր
իր երախտագիտական պարտականութիւն
մը կատարելու համար՝ քանի որ ինք Տիւզ-
եանց շնորհիւ հառած էր իր ունեցած զիր-
քին, մեծապէս աշխատեցաւ միութիւն մը
առաջ բերելու համար. այս նպատակով կազ-
մուած յանձնաժողով մը, անգամ ունենալով
ուրիշ երեւելիներ, Գրիգոր Ամիրա Պալեան,
Կարապետ Ամիրա Ազնաւորեան, Ճանիկ Ա-
միրա Փափազեան, Յովհաննէս Ամիրա Եր-
կանեան, Յակոբ աղա Մանանեան և ուրիշ-
ներ, շատ անգամ իր տան մէջ կը գումար-

ուէր և ինք անձնապէս դժուարութեանց
պարագային հաշտարար ուղղութիւն մը կ'ու-
նենար, այնպէս որ կարելի եղաւ համաձայ-
նութեան գիր մը խմբագրել որ գործադրու-
թեան համար կը ներկայացուի Պօղոս Պատ-
րիարքին. այդ համաձայնագիրն է որ կը կոչ-
ուի «Հրաւէր Սիրոյ»: Պատրիարքը կը վա-
րանի գործադրել «Հրաւէր Սիրոյ»ի տրամա-
դրութիւնները, սակայն Օսմ. կառավարու-
թիւնը հասկնալով հակակաթողիկէ պայքա-
րին փնտաւարութիւնը և բացարձակ անի-
րաւ ըլլալը խիստ իրատեով մը կը պարտա-
դրէ համաձայնագիրն անպայման գործադ-
րութիւնը. որուն վրայ Պօղոս Պատրիարք կը
հրատարակէ զայն 1820, 11/23 Ապրիլին:

«Հրաւէր Սիրոյ» ինչ գեղեցիկ վերտա-
ռութիւն, բայց հակակաթողիկէ պայքարին
վերջ մը տալու անկեղծ փափաք չըլլալուն,
երկար ժամանակ չանցած դարձեալ խզում
յառաջ կու գայ:

Հայ-Կաթողիկէները այն ատեն միայն
հանգիստ չունչ կ'առնեն, երբ Օսմ. կառա-
վարութիւնը պաշտօնապէս զիրենք Հայոցմէ
անջատ և անկախ հասարակութիւն կը ճանչ-
նայ իրատեով և իրենք Ֆէնէր թաղը ժողով
գումարելով Նախագահ կ'ընտրեն Անտոն Վ.
Նուրիճեանը (1830 Փետր: 15/27):

Իսկ արդի հակակաթողիկէ պայքարը,
նոյն իսկ իրենք զիրենք Կաթողիկէ անուա-
նողներու կողմէ մղուած տեսնենք թէ ինչ-
պէս պիտի վերջանայ: Նոր «Հրաւէր Սիրոյ»
մը օգտակար կ'ըլլա՞յ արդեօք . . .

ՊՍԱԿ ԴՊԻՐ

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Մարտ 2	† Կիւ. քի. Ե. Բաւաւմ. Դաւաւորին
3	Բշ. գժ. իր. or Մեծ Պաճոց
4	Դշ. գի. լ.
5	Դշ. դժ. լա.
6	Եշ. դի. յր.
7	Ուրբ. ան. յգ.
8	Շր. ակ. լղ.

Ս. Դր. Լուս.
մուշմ ի վիրապն

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔ ՍԵՐԱՍՏԻՈՅ:— Աստիք առաքինի և կորովի Քրիստոնեայ երիտասարդներ էին, որոնք զինուորութեան մէջ երեւելի ըլլալով, մասնաւոր գունդ մը կազմեցին՝ Լիկիանոս Կայսեր օրով, որ քեռայր ու գահակից էր Կոստանդիանոսի Աստիք մեծաւ մասամբ փոքր Հայքէն ու Կապադովկիայէն էին: Իրենց զինաւորներն էին՝ Կիւրիոն, Կանտիա և Գոմիոս: Իրարու մէջ մաքուր սիրով կապուած և անդադար ազօթքով կը զբաղէին, որուն զօրութեամբ ո՛չ միայն մեծամեծ քաջագործութիւններ կը կատարէին թշնամեաց դէմ, այլ և հրաշքներ կը գործէին ի նպաստ բանակին: Ինչպէս ջրոյ նեղութեան մը պահուն, աղօթելով անձրեւ տեղացուցին յորդանան, ուրիշ անգամ մ'ալ երբ ամբողջ բանակը խուճապի մասնուած էր, իրենք միայն անասան կուրծք տուին և ետ մղեցին բարբարոսաց թափն ու յարձակումը և բռնակն ազատեցին:— Երբ Լիկիանոս նոր հալածանք հանեց Քրիստոնէից դէմ, Լիւսիաս Հազարապետի հրամանաւ Աքրիկոզոյոս կալանաւորեց Քառասուն. Մանկունքն ի Արամատիս, որոնք յատենի դատաւորին աներկիւղ խոտորվանեցան զՔրիստոս, և բնաւ տեղի չտալով ամպարիշտ դատաւորին օձանման մարդկայն ճարտարանաց, հաստատուն հաւատքով և երկնաւոր թագաւորին բորբոք սիրով՝ անմահութեան պատկին ակնկալուք, բանալ զրուեցան՝ ուր տեղադար կը սաղմոսէին, մինչեւ ցգալուստ Լուսիասայ ի Կեսարիոյ, որ և ազուհեաբարոյ շողքորթութեամբ չկարենալով ստնանել անոնց հաստատամտութեան, Աստուածորութեան և չարչարութեան քաշելու փութոյն և անցաւ փառքն արհամարհելով՝ անոնց երանութեան պատկին, արտաւանգ և հրամայեց որ սուրբերուն բերանը քարով զարնեն: Բայց Աստուծոյ հրաշքով քաջութեան սկսած զիտար զարնել, քարկոծել և Լիւսիասն ալ երբ քար մը կը նետէր Սուրբերուն վրայ, քարը գնաց դատաւորին ծնօրը ջախջախեց: Կրկին բանաւորկուեցան. և Քրիստոս Տէրն մեր այս երկրորդ անգամ գիշերը երեւնալով խրատուեց զիրենք քաջարար յարատեւելու: Հետեւեալ օրը Լիւսիաս սուրբ Քառասունքը կապանք նետել տուաւ Սերաստիոյ մօտակայ լճակին մէջ, որոյ սառցոյններուն միջեւ անոնց նուիրական մարմինները կը ճարճաւէին և արեամբ կը ներկուէր լիճը: Մէկը վհատեցաւ և ինկաւ հաւատքէ, և ապաստանեցաւ ջրում՝ բազմեցն զոր չարաւէրն Լիւսիաս հոն շինել տուած էր ի փորձութիւն. բայց տաքին հակադրեցուցեալ թշուառականք ինկաւ մեռաւ առ եանց: Զայս տեսնելով հեթանոս պաշտպաններէն մին, շնորհքի սքանչելիքով դարձի եկաւ, և խոտորվանելով զՔրիստոս նետուեցաւ սառցոյններու մէջ, և Ս. Մանկանց թիւը լըրացնելով, անոնց պատկին ալ արժանացաւ Բանաւորը գալով իրեններուն հետ, երբ տեսաւ որ դեռ չէին մեռած, հանել տուաւ Սուրբ Նահատակները, և անոնց բարձրն (ազգրները, սրունքն ու ուրքները) ջախջախել տալով սպաննեց և սալլերով փոխադրել տուաւ

և պրեց անոնց մարմինները Ալէս գետին մօտ: Երիտասարդագոյնն էր Մելիտոն որ բարձերուն խորհուրդէն վերջը դեռ չէր մեռած, անոր մայրը որ եկած էր սիրելի զաւկին մարտիրոսութեան փառքը նկատել, զրկեց զանի և սրպէսզի իր եղբայրներէն չզատուի, տարաւ մինչեւ գետը. ճամբան հոգին աւանդած էր Մելիտոն: Սուրբերուն տկրները գետը ամացին անօրէնք, զի մի՛ գուցէ Քրիստոնէայք գողնան. բայց Արամատիոյ Ս. Պետրոս Եպսկին երեւնալով, Սուրբերն յայտնեցին թէ գետոյն մէկ ծոցին մէջ ամփոփուած էին անոնք. և նա ժողովեց և յարգանքով թողեց: Աստիք Նահատակութիւնը տեղի ունեցաւ յԹ Մարտի 316:— Մեծամեծ Ս. Հարք, ինչպէս Ս. Բարսեղ, Ս. Գր. Նիւստցի, Ս. Եփրեմ, և ինչ ներքաղեններ գրեցին Ս. Քառասունից վրայ:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒՅ ԻՆՆԻՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գիրք Ա.—Գլ. Գ.—Ճօժարարեան վարդապետութեան վրայ:

(Շար.)

Ո՛հ, ո՛րչափ շուք կ'սկզբնի աշխարհիս փառք: Երանի՛րք ակնոց (գիտնոց) վարք համաձայնեք իրենց գիտարեանք. ակն առե՛ք անո՛ւ շուք տրոյտ՝ ու կարգացած կ'ըլլալիս:

Ո՛րչափ շատեր կը կորսուին աշխարհիս մէջ ընդունայն գիտարեան պատճառաւ, որովհետեւ ինչ հոգ կը քանին Աստուծոյ ծառայութեան:

Եւ որովհետեւ աւելի կ'ընտրեն մեծ յոյս սան խնարհ, ակնոր համար կը հանդիսանան կ'անհետանալ իրենց խորհուրդներուն մէջ:

Ճշմարտապէս մեծ է այն՝ որ ունի մեծ սեր:

Ճշմարտապէս մեծ է այն՝ որ իր անձին համար փոքր է. եւ առ ոչինչ կը համարի ամեն գիտական պատիւ:

Ճշմարտապէս խնկեմ է այն՝ որ ամեն երկրաւոր բաները կ'ընդունի կը համարի, որպէս զի գիտարեան շահի:

Եւ ճշմարտապէս քաջ գիտուն է այն՝ որ Աստուծոյ կամքը կը կատարէ եւ իր կամքը կ'ուրանայ:

ՀԱՂՈՐԴԱԿՈՒԹԻՒՆ ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆՍ

COLLECT. Հ. Ա. ԷՁ 99. Թիի 311

Հրահանգ Ս. Ժողովոյ Տար. Հաւատք 1729 (*)

(Շար.)

Ահա՛ աստիք են այն հրահանգները զորոպէս քէ հաւատացեալներուն յանձնարարել. և ասոր համար է որ Ս. Ժողովս խափի կը

(*) Տես Թիւ 82 էջ 108:

հրամայէ Առաջնորդներուն, Մխիթնաբններուն և ամէն հոգ հոգեոց ունեցող քահանաներուն՝ յԱրեւելս, որպէս զի միաշունչ և միահոգի ամէնքն ալ միշտ այս մի և նոյն բանը ըսեն, և մի և նոյն մտքի և որոշողութեան մէջ մնան, և ընաւ անոր հակառակը չսորվեցնեն, թէ՛ իբրեւ խորհուրդ և թէ՛ իբրեւ տնօրինում. այլ ևս առաւել յորդորեն հաւատացեալները, ըստ գիպելոյ պարագայից, որպէս զի բացարձակապէս հեռու կենան հերձուածողներու հերետիկոսներու հետ յասուածայինս հաղորդակցութենէ. իսկ երբ տեսնեն որ անոնք այս կանոնէն չեղած են, յորդորեն և սորվեցնեն որ այս միտքը Ապաշխարութեան Խորհուրդին մէջ, իրենց խոստովանահօրը յայտնեն որպէս զի Աստուծոյ թողութիւն առնուն և ապագային աւելի զգուշաւոր ըլլան:

Իսկ խոստովանանք ընելու ատեն Մխիթնաբնները կամ հոգեւոր հայրերը զիպուածներուն այն պարագաները որոնք ապաշխարողաց յանցանքը աւելի կամ նուազ կը ծանրացնեն, ուշի ուշով քննեն և անոնց աչքին առջեւ դնեն. միշտ առ այն ուշ ունելով որ չըլլայ թէ այս բանիս մէջ անոնց խիղճը թոյլցնին. այլ մանաւանդ յարմար յորդորներով և խրատներով աւելի երկիւղած և զգուշաւոր ընեն, մի գուցէ յասուածայինս հաղորդակցելով հերետիկոսաց և հերձուածողաց հետ, իրենց հոգեոյն փրկութիւնը վտանգեն:

Սովորութիւն է առ հասարակ առիթ բոնեւել հալածանքները զորս հերձուածողներէն և հերետիկոսներէն կը կրեն. Կաթողիկեայք երբ հեռու կենան անոնց եկեղեցիներէն և պաշտամունքէն: Պէտք է սակայն հոգ տանին քահանայք որպէս զի ամէնքն ալ լաւ թափանցեն թէ յաճախ այս երկիւղը անհիմն է. նամանաւանդ բոլորովին կարեւոր է հալածանքի պատճառաւ ալ աւելի չտալ. անոր համար ալ որ հալածանքը համահաւասար է հաւատոյ հարցափորձի. նոյն բանը ցոյց տալ նաեւ թէ՛ այն քաջարի և հաւատքի մէջ անդորդուելի Կաթողիկէներու օրինակներովը, որոնք այս տեսակ վշտակութիւններու

պատճառաւ չեն սայթաքիր, թէ վերոյիշեալ վարդապետական սկզբունքով, զոր նոյն ինքն Արեւելեան եկեղեցին ընդունած է, և թէ վերջապէս Կաթողիկէ անուան արժանապատուութեամբը որ բնաւ թոյլ չի տար որ իրենք հպատակին իրենց հոգիներուն և Հռոմիայ եկեղեցւոյն հետ հաւասարի մէջ միութեանը թշնամիներուն. մանաւանդ առաւել ի նկատի առնուն որ հաւատացեալները խոշտանդելու այս արուեստը ուրիշ նպատակ չունի եթէ ոչ անոնց դաւանիլ տալ թէ չաբափառները ճշմարիտ արարողութեան ճշմարիտ հաւատոյ և ճշմարիտ եկեղեցւոյ պաշտօնեաներ են և ապապէս Կաթողիկէները նոյլին գործով, կամ հաւատուեաց ընեն և կամ գտնէ իրենց մոլորութիւնները հաստատել տան. թէպէտեւ շարունակ կը զուրցնեն թէ անոնց հաղորդակցութիւնը կը պահանջեն մի միայն ծէսին պահպանութեանը և ողորմութեան սուրբերուն համար: Եւ երբ այս ամէնը հաստատապէս և ուժգնապէս եւ կրկնեալ յորդորներով դրոշմուին հաւատացելոց մտքերուն մէջ, յիշաւի կրնայ յուսացուիլ որ անոնք իրենք իրենցմէ աւելի կազմ և պատրաստ ըլլալով վիշտ և անիրաւութիւն կը բերու, նաեւ աւելի հաստատուն և աւելի յարատեւ պիտի ըլլան ի միութեան և ի հաղորդութեան ճշմարիտ, մի եկեղեցւոյ զոր կը դաւանին:

Քաջ համոզուած է Ս. Փողոստ թէ Արեւելքի մէջ զանազան Առաջնորդները և հոգիներու հոգաբարձուները, ևս առաւել Մխիթնաբնները այս Հրահանգը իբրեւ կանոն առնելեաց պիտի նկատեն՝ այս մասին եղած վէճերը գլխովին ի բաց մերժելով, և թէ՛ գործելու թէ սորվեցնելու ատեն՝ հակառակութիւնները մէկդի թողլով՝ ուրիշ բանի չպիտի հետեւին: Իսկ եթէ հակառակ մեր ազնկալութեան՝ այսպէս գործուի, գիտնան ամէնքը, որ Կաթողիկէ անուամբ կը պարծին, թէ Ս. Փողոստ յանձնարարներուն դէմ աւելի ազդու միջոցներ ձեռք պիտի առնու, և զանոնք պիտի նկատէ իբրեւ ոչ այնքան ձեռնհաս հոգիներու առաջնորդութեան և Արեւելեան Առաքելութեան:

(Շարունակելի)

ԳԱԹՕԼԻԲ ՄԵՉԼԵՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ

(Տեվամի)

6. Թարիխին սահի վե մեվսուգ վագաւարը եւ ձէնապը Հագգըն վարըղընը իսպար իտելը:

Էվլէթ, Թարիխին սահի վե մեվսուգ վագաւարը տախի Ալլահըն վարըղընը իսպար իտելը: Զիւնքի պիր վարըղ իւշ սուրէթլէ մեվճուտիյէթին ինսա իտէպիլիր, կեօրիւնեքի, սեօլիյեքի վե իւլիյեքի: Իմա մատամ քի Ալլահ ֆէրտէվսի արղիտէ (երկրաւոր Դրախտ) իւք աթաւարըմըզա, Սինա տաղընտա, Մովսէսէ կեօրիւնմիւշ — Նահապետէրէ վե էվլիայի քիրամա սէյլէմիշ — ասրլարտան պէրի տէ տախիա իշլէմիշտիր, չէօյլէ քի կէրէք Ահադ Աթիգատ վե կէրէք Ահադ ձէտիտտէ ծուռն կեօթէրտիյի միւճիւզաթլար, սըհէթինի վե մեվսուգիյէթինի Թարիխին գապուլ իշլէմիշ օլտուղը վագաւարտան տըր, պինաէն ալէյ, պու սահի վե մեվսուգ վագաւար Ալլահըն վարըղընը իսպար էտելը:

Հագիգաթ իքի սուրէթլէ քէշֆ օլունապիլիր. եւ 1. պիղզաթ քէնտին ծըր թանըմաղլա, վե եախտ 2. պիր տիկէրինին ծըր սանա նազլ էյլէմէսիյէ: Շէօյլէ քի, ինսան եւ պիլիր վե եւ ինանը: Նէ գէման պիր հագիգաթա, եալընըզ բուհընըն մեքէքէրի, ապը, իզանը, վիճտանը, գամիրի, ազալը, պէտէնի վասիթասըլլա տէսթրէս օլուր, եագին բէյտա իտէրսէ, օ հագիգաթը պիլիր տէնիլիր, ֆագաթ սայիրէրին նազլ ու չէհատէթիլէ պիր հագիգաթը գապուլ իտէրսէ, ծա, ինանըր տէնիլիր:

Ալլահըն վարըղընը անլայապիլմէնին էն գօլայ եօլը, Թարիխին չէհատէթիլէ ծըր թէթէպալիւ իթմէք տիր: Աստուածաշունչ թապիր օլունան քիթապը չէրիֆ սատէճէ պիր Թարիխ քիթապը գապուլ օլունտըլը թագտիրտէ պիլէ, իւմին թալէպ իթտիյի քեաֆֆէյի սըտգ ու մեվսուգիյէթ էվսաֆընը հաիգ տիր: Ազլիւնըն (rationalistes) պու խուսուստաքի ինքեարլարը բէք ապէս տիր:

չիւնքի, Ալէքսանտըն վե եւ Նարօլէօնըն ֆիւթուհաթլարընը ինքեար իթմէք գապիլ օլմատըղը կիպի, Գիթապը Շէրիֆին Թարիխի վագաւարընը ինքեար իթմէք տախի վայրը գապիլ տիր:

Իմա, Գիթապը Շէրիֆէ, Ալլահ պիր չօգ սուրէթլէրտէ քէնսի քէնսիսինի կեօսքեքմիշիր, իւք աթաւարըմըզա, Նոյ Նահապետէ տիկէր Նահապետէրէ վե բէյլամպէրլէրէ սեօլիյէթիւն... վե մատամ քի քէնտի քէնտիսինի կեօթէրէպիլմէք վե սէօլէյէպիլմէք իշլին վար օլմագ ինապ էտէր, էօյլէ իսէ կեօրիւնմիւշ վե սէօլէմիշ օլտուղը Թարիխէ միւճիւթ օլան Ալլահ, վարտըր: Հիշ պիր ֆալիլ մախուզըն քէնտի գուվվէթի գաթիյէսիյէ հուսուլա կէթիրէմէյէճէյի միւճիւզաթլար, պիր մեվճուտիյէթին ասարը մահուս սէլէրի, Ալլահըն եսերիւրինսէն պաշգա պիր չէյ տէյիլ տիրլէր. պինաէն ալէյ, Գիթապը Շէրիֆին հիքեայէ էյլէտիյի միւճիւզաթլարըն հէր պիրի քէնտի պաշընա ձէնապը Հագգըն վարըղընա պիր տէլիլի ճէլիլ տիր:

7. Էպէսի պիր վարըղըն լիզումը եւ Ալլահըն մեվճուտիյէթինի իսպար իտելը:

Վարըղը Էպէտի օլան պիր վարըղըն լագըմ օլմատը տախի Ալլահըն վարըղընը իսպար էյլէր: Զիրա, տիւնեատա կեօրիւյօրըզ քի պու գատար չէյլէր վար տըր. հալպու քի, էյէր վարըղը Էպէտի օլան պիր վարըղ օլմատայտը, տիւնեատա հիշ պիր չէյ վար օլմայաճագտը: Էօյլէ իսէ Էպէտի պիր վարըղըն մեվճուտիյէթին գապուլ իթմէք գաբուրի տիր: Վէ մատամ քի, պու Էպէտի վարըղա մալիք օլան մեվճուտիյէթ Ալլահ տըր, պինաէն ալէյ, Ալլահ վար տըր:

1. Տիւնեատա վարըղա մալիք պու գատար չէյլէր օլտուղը ինքեար օլունամագ պիր հագիգաթ տըր, չիւնքի կեօլլէրիւյզլէ ծաւարը կեօրիւյօր վե հաստէլէրիւյզլէ հիսս էյլէյօրուլ:

2. Էյէր քա Էպէսիսէն պերի վարըղա մալիք օլան պիր Էյլ օլմատայտը, պու կիւնքի մեվճուտ օլան եսեանըն հիշ պիրի վար օլա-

մայանագր: Չիւնքի պու շէյէր, միվնուսի-
յիքիւրի օլմասըլը հասէպիյէ, քէնտի քէն-
տիւէրէ վիւճուտ վէրէմէյէճէքլէրտի: Եօզ-
տան հիւ պիր շէյ հուսուլա կէլէմէյէճէյի աէ-
պէպլէ, եօզտան տա վարըզ ալամայանագ-
լարար: Էօյլէ իսէ, պաշգալարընա վարըզ
վէրէճէք, օնլարը վար իտէճէք իւք պիր է-
պէտի վարըզըն մէվճուտիյէթի, ազլճա տա,
մանթըզճա տա սուրէթի գաթիյէտէ լազըմ
տըր:

3. Պու հպէսի վարըզա մալիֆ օլան իլֆ
վարըզ Ալլահ սըր: Չիւնքի, պիր քէրրէ
պէօյլէ էպէտի վարըզը օլան պիր վիւճուտ
գապուլ իթտիք մի, մութլագա օնուռն, էվ-
վէլի վէ ախըրը օլմայան էպէտիլիք կիպի
պիր վասֆա, նիհայէթսիզ պիր միւքէմմէ-
լիյէթէ մալիք օլտուզընը տա գապուլ իթ-
մէքլիլիմիզ իճապ էտէր: Փագաթ ալի վա-
զըթտա պիր քիմսէնին գօլը քէնտիսինտէն
պէօյլէք օլմատըզը կիպի, շուռնը տա պիւմէ-
լիյիզ քի, պիր վարըզըն հայիզ օլտըզը էվ-
սաֆ տախի, օնուռն աալընտան, մահիյէթին-
տէն, ճէվհէրինտէն տահա իւսթիւն օլամազ.
օնլարա ֆայիզ օլամազ: Շու հալտէ, հպէսի
օլան պիր վարըզ մութլագա նէհայէթսիզ
պիր վասֆա մալիք օլաճաղընտան, օնուռն
մահիյէթի, աալը տա նիհայէթսիզ օլմազ լա-
զըմ կէլիւր, վէ պու նիհայէթսիզլիք օնուռն
հէր պիր քէմալաթընը տա թալախի իթմէք
իզթիզա իտէր:— Վէ մատամ քի, նիհա-
յէթսիզ պիր վարըզ տէմէք, Ալլահ տէմէք
տիր, էօյլէ իսէ Ալլահ վար տըր:

4. Պու էպէտի վարըզ տախմա վար օլ-
մուշ օլտըզընտան, պիր պաշգալարընտան
վարըզ ալմըշ օլամազ, չիւնքի քէնտիսի
եալընըզ իտի, քէնտի քէնտինէ տէ վարըզ
վէրմիշ օլամազ, չիւնքի հիւ պիր քիմսէ քէն-
տի քէնտինի եարատամազ: Էօյլէ իսէ, պու
իւք վարըզ պիզգաթ քէնսի քապիաթընըն
վանիպ իլ վիւճուտ լիւզումըլլա վար տըր:
Իշթէ պիզիմ տէ, լազըմ էլ վիւճուտ (néces-
saire) թէմիյէ իթտիլիմիզ վարըզ պու տըր:
Պիր տայիքէնին միւտէվվէր օլմասը, պիր
միւսէլլէսին իւշ քիւշէսի պուլընմասը թահ-
թը վիւճուտտա օլտուզը կիպի, Ալլահն է-

պէտի պիր վարըզ օլմասը տա ալիսի նիս-
պէթաէ լապիւտա էլզէմ տիր:

Էվվէթ, պիզ պիր հպէսի վէ լազըմ էլ
վիւճուտ վարըզըն աալը թապիաթընը մա-
հիյէթինի անլայամալըզ. չիւնքի օ հուսուտ-
սըզ տըր, նիհայէթսիզ տիր, պիրաէն ալէյի
տէ մահտուտ օլան իտրաքը պէշէրին ֆէվ-
գինտէ տիր. օնը անլամազ իսթէմէք, Օզիա-
նուռն սուլընը ալուճըմըզըն չուզուրընա
սըզալըմազ իսթէմէք գապիլինտէն պիր իմ-
քեանսըզըզ տէմէք տիր: Փագաթ օնուռն
թապիաթընը անլայամալըզա պէրապէր, օ-
նուռն հէր հալտէ վար օլմասը լազըմ օլտու-
զընը, լիւզումը մէվճուտիյէթինի անլայա-
պիլիլիզ:

(Մապաի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ե Ա Շ Խ Ա Ր Հ

Ս. Քահանայապետին երէց քրոջ յուզարկաւո-
րութիւնը աեղի ունեցաւ Փետր. 13ին, Հինգշաբթի
օրը, պարիսպէն դուրս գտնուող Ս. Լաւրենտիոս Մայր
Յիկեղեցւոյն մէջ, որ լցուած էր խուռն բազմու-
թեամբ: Կարդինալները, գրեթէ ամբողջ դեսպանա-
կոյոր և Հռոմի ապետապետական դատարգէն
բաղմութիւ անձնաւորութիւններ ներկայ էին: Հոգե-
հանգստեան Պատարագը մատոյց Ջամբինի Գերա-
պաշառը: Երգեցողութիւնը կատարուեցաւ առաջ-
նորգութեամբ երաժշտապետ Փելոզիլի, որ դարձեալ
նուագեց Պաւլիերայի խնամակալին յուզարկաւորու-
թեան համար յօրինած պատարագի — երաժշտու-
թիւնը:

Ն. Սրբութիւնը՝ իր երէց քրոջ մահունն առթիւ
բազմաթիւ ցաւակցական արտայայտութիւններ ըն-
դունեցաւ: Ոչ-կաթողիկէ իմութեան շատերը հա-
մակրական յօգուածներ նուիրեցին այս ջերմեանդ
Տիկնոջ, որուն բարութեան ու գութին քաղցր յի-
շատակը անջնջելի պիտի մնայ ամէնուն մտքին մէջ:

*. Ար հաւաստուի թէ, հակառակ Աւստրիոյ
ընդդիմութեան, Սերպիա որոշեց է Ս. Աթոռին մօտ
պատուիրակութիւն մը ղրկել Սերպիոյ և անոր կըց-
ուած նոր գաւառներու մէջ գտնուող կաթողիկէնե-
րու պաշտպանութեան մասին ուղղակի բանակցելու
համար:

*. Իտալիոյ Խորհրդարանին մէջ բոլորն վիճա-
րանութիւն մը բացուեցաւ՝ կառավարութեան կրօ-
նական քաղաքականութեան մասին, ձենովայի Ար-
քեպիսկոպոսին պաշտօնավարութեան հրաման (exce-

quatur) զլացուած ըլլալուն առթիւ: Նախ Մուրի, կարգադրելի քահանան, սկսաւ խօսիլ այնքան քինա- յոյզ և ատելութեամբ թռնուորեալ ոճով մը որ զգուանք ու խորշում ազդեց երեսփոխաններուն անգամ, որոնք շատ հեղ պոռացին երեսն ի վեր «Կարգուեաց»: Միւս բանախօսութիւններուն ամենէն նշանաւորը եղաւ Եովնի Կաթողիկէ երեսփոխանինը, որ իրաւագիտական մեծ հմտութեամբ պարզեց exe- quatur ինքիբը երաշխաւորութեան օրէնքին տը- րամագրութեանց համեմատ. և ցոյց տուաւ թէ կա- ռաւարութիւնը չի կրնար, առանց իր իշխանութեամբ զեղծանելու, պաշտօնավարութեան հրաման զրոնալ Ս. Քահանայապետէն անուանուած Եպիսկոպոսի մը: Փինոքքերարօ նախարարը ծանոյց թէ կառավարու- թիւնը իրաւամբ յանձն չ'առնուր պաշտօնավարու- թեան հրաման տալ Գարն Գերապայծառին՝ ձենո- վայի Արքեպիսկոպոսութեան համար. և յուսալ բե- րաւ իր կեղծուպատիր պատճառները:

Մանրակշիւ պայքար մը կը լացուի ուրեմն Ս. Աթուռն և Իտալական կառավարութեան միջեւ:

*. Մեծ ցաւով կը ծանուցանենք թէ վախճա- ներ է Գամպրէի Սոնուա Արքեպիսկոպոսը. 84 տարե- կան շահագնացալը բաղմարդիւն կեանք մը ունեցեր է: Այլ և այլ տեղեր ժողովրդապետական պաշտօն վարելէ վերջ, 1890 Մարտ 19ին անուանուեր է Սէն- Տիէի Եպիսկոպոս: Երկու տարիէն աւելի փոփկաւար, կենցաղազէտ եռանդով այս գործը կատարելէ յետոյ 1892 Նոյեմբեր 26ին Լեւոն ԺԳ-ի կողմանէ կը կոչ- ուեր Գամպրէի Արքեպիսկոպոսութեան պատուոյն, զոր յանձն կ'առնուր մեծ գեղարութեամբ: Հին Սոնուա Գերապայծառին յանկուցիչ բարութիւնը փայլեցաւ անխախտի, և գրաւեց ամենուն սիրտը: Եւ երբ կառավարութիւնը պահանջեց որ պատու- հասէ անիրաւ օրինաց ընդդիմացող քահանաները, Սոնուա Գերապայծառը հրատարակեց սքանչելի բո- ղաբար մը, որ ամբողջ մամուլէն արտատպուեցաւ և ամէնէն ընդունուեցաւ խանդավառութեամբ:

Տըլամէր Գերապայծառը որ բաւական ատենէ ի վեր Ս. Աթուռն կողմանէ Մերոնին Արքեպիսկոպոսին օգնական կարգուած էր, վերջին Ս. Խորհուրդները մատակարարեց հանգուցելոյն, որ խաղաղիկ աւան- դեց իր հոգին փետր. 7ին:

Ըստ իրաւանց Գամպրէի Արքեպիսկոպոսութեան աթուր բարձրացաւ Տըլամէր Գերապայծառը. իրեն օգնական Եպիսկոպոս անուանուած է Շարօ Կանոնի- կոսը, Բէնի ընդհանուր փոխանորդը, Միլէտոպոսի տիրոջնով:

*. Քիսնական կառավարութիւնը՝ Արտաքին Գործոց Նախարարին առաջարկէն՝ վրայ Պատուոյ- Լեզէնի ասպետ անուանեց Քիէն-Չանկի (Չինու- տան) Առաքելական փոխանորդ Կէպրիան Գերապայ- ծառը: Եւ Լազարիսթիներու Արեւելքի Գաւառապե- տը, Հայր Լուպին, Ֆրանսայի մատուցած բացառիկ և արտակարգ ծառայութիւններուն համար:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը՝ Ս. Քահանայա- պետին երէց քրոջ Ռոզա Սարգսի մահուան առթիւ ուղղեց Ն. Սրբութեան՝ հետեւեալ ցաւակցական հեռագիրը:

Կ. Պոլիս, 18 փետրուար 1913

Ա. Ս. Քահանայապետ ՊԻՌՍ Ժ.

Հռոմ

Ձեր Սրբազնութեան առաքինաւոր քրոջ մահ- ուան առթիւ ամենաւսալին ցաւակցութիւններ կը մատուցանեմ: Կր մաղթեմ Ձեր Սրբազնութեան երկար ու բարեբաւսիկ կեանք. կը հայցեմ Ձեր առաքելական օրհնութիւնը:

Պ. ՏՐԻԱՐԺ ԹԵՂԵԶԱՆ

Ն. Գերերջանկութիւնը ընդունեցաւ Հռոմէն հե- տագայ պատասխանը.

Հռոմ, 19 փետրուար 1913

(Գոսարանցայի ճամբով)

Ա. Ս. Պատրիարք ԹԵՂԵԶԱՆ

Բերա, Կոստանդնուպոլիս

Մըքաւան Հայր ի սրէ կ'օրհնէ զՁեզ եւ Ձեր բո- վանդակ Պատրիարքութիւնը՝ շնորհակալ ըլլալով Ձեր որ- դիական մաղթանքներուն ու սրաբուխ ցաւակցու- րիւններուն համար:

ԿԱՐԴ. ՄԵՐԻ ՏԵՂ ՎԱՆ

*. Սոմանէն մեզ կը գրեն որ նուիրատուութեամբ ծանօթ Մեծ. Հէքիմեան Յովհաննէս էֆ., որ ամէն պարագայի բարերար մը եղած է ոչ միայն տեղւոյն Եկեղեցւոյ և հասարակական ձեռնարկներու մէջ, այլ նաեւ ուրիշ թեմերու, վերջերս գեղեցիկ անակըն- կալ մը ըրած է զետեղել տալով Տեառնդառաջի առթիւ Սիրտ Յիսուսի գեղեցիկ արձանը տեղւոյն Եկեղեցւոյ աջակողմեան խորանին վրայ, որ այդ ասո- ուածային սիրոյ հոգին պաշտամանը նուիրուելու սահմանուած էր: Կը ապստէ այժմ ժողովուրդը իր Եպիսկոպոսի գալստեան՝ հանդիսիւ օրհնելու համար յիշեալ արձանը: Մերձակայ մեծ պահոց առթիւ որքան յարմար պիտի ըլլայ այդ նուիրագործումը, որով պիտի օրհնարանուի հոն ինչ որ Պոլսոյ մէջ սըր- բապիղծ գրիչներէ հայհայուեցաւ, պիտի պատուուի ինչ որ առաթուր կոխուեցաւ ու անարգուեցաւ քրտո- մէնելի անարգանօք չարչարանաց Տեառն, որ մարմնէն տուալ Սրտին չարչարուեցաւ: Այն Յի- սուան որ խոստացաւ լիացնել իր օրհնութեամբ այն տուններն, յորս իր սիրտը պիտի պաշտուէր, ան- շուշտ պիտի օրհնէ Հէքիմեան Գերդաստանի պէս բա- րեւալտ տներ և աշապիտեաց յաճախութեամբ ամ- րող Սղգը:

*. Ուրբաթ օրը փետր. 24ին, Ամենապատիւ Հո- գեւոր Տէրոջ կողմանէ՝ Յունաց Նորընտիր Տ. Եւրմու- նոս պատրիարքին շնորհաւորութեան գնացին Արհի. Աւետիս Արքեպիսկոպոս Արփիարեան. Արհի. Յովհ:

Եպսկ. Նազկեան, Գեր. Ռափայէլ Վ. Էքմէքճեան և Մեծաշուք Պօղոս Էֆ. Մովսէսեան: Մեծ պատիւներով առաջնորդուեցան շքարարհը, և մեծարուեցան Նոր պատրիարքէն և Ներկայ գտնուող Մետրապօլիտներէն և բարձրաստիճան տնօնաւորութիւններէն: Եւ կէս ժամի չափ սիրայիւ խօսակցութենէ վերջը նոյն հանդիսաւորութեամբ մեկնեցան:

Անցեալ շաբաթ Կաթողիկոսարանի սրահին մէջ ըստ սովորութեան գումարուեցաւ Կրօնական Ժողովը և զբաղեցաւ ինչ ինչ կարեւոր խնդիրներով:

Մասօթ արգիլեալ թերթը Նոր յերիւրանքներ կ'ընէ, իբր թէ Ս. Աթոռը պախարակած ըլլայ Ամենայ. Հոգեւոր Տէրը Նոր-Տոմարի համար և թէ իւր մասին արամադրութիւններ կը պատրաստէ եղբայրս ամէն դիտումնաւէտ ակնարկներն ԲԱՅԱՐԱՍԿԱՊԷՍՈՒՏ են. այդ թերթը սուտերու գործանոց մը եղած է:

Հինգշաբթի օր Յունաց պատրիարքական փոխանորդ Եպ. Տէան ունենալով Պատրիարքարանի Ա. գործակատար Իբրաիմ Էֆէնտին, փոխարարձ աջակցութեան եկաւ Կաթողիկոսարան և մեծարանօք ընդունուեցաւ Ամեն. Հոգեւոր Տէրոջ կողմէն. Ներկայ էին նաև Արքեպ. ունք և Եպ. ունք: Փոխանորդ Եպ. իւր նորընտիր Պատրիարքին խորին շնորհակալութիւնները մատուց առ Ն. Գերեջանկութիւն, իւր փափկանկատ շնորհաւորութեանց համար. և մտղթեց իրեն կար և յաջողութիւն: Քառորդ ժամ մը տեսեց խօսակցութիւնը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր .

Պուլկարիա արածնած է 4500 օտարահպատակներու մեկնումը Ետրնէէն:

Ետրնէի, Պուլկարիի և Չաթալճույի մէջ տեղացած սաստիկ ձիւնին պատճառաւ պատերազմական ընդհարումները դադարէ են առ ժամանակ մի:

Կը հաւաստուի թէ երբ Թուրքիա որոշում տայ հաշտութիւն կնքելու, հաշտութեան նախնական պայմանները պիտի ստորագրուին պատերազմի դաշտին վրայ, որպէս զի Նոր յապաղում տեղի չունենայ: Կ'ըսուի նաև թէ Պուլկարիա ինչպէս նաև միւս զինակիցները պատերազմական տուգանք պիտի պահանջեն:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Իււանախոյ բարենորոգմանց մասին Ասքիթի Դահլիճին (Home Rule) օրինագիծը Երեսփոխանական Ժողովին մէջ 410 ձայնի առաւելութեամբ ընդունուեցաւ բայց Լորտերու խորհրդարանին մէջ 255 ձայնի առաւելութեամբ մերժուեցաւ:

Այս օրինագիծին համեմատ Իււանա ալիսի վերստանայ իր ինքնավարութիւնը: Երկու խորհրդարանի պիտի ունենայ և բարձրագոյն ատեան կամ ձեռակցոյ մը, սահմանափակ քուէարկութեամբ ընտրուած. 2. Ընդհանուր քուէարկութեամբ անուանուած 460 երեսփոխաններու խորհրդարան մը:

Ասքիթի Դահլիճը երբեք ետ պիտի չլինայ այս օրինագիծին հաստատութեան համար հարկ եղած հետապնդումները ի գործ դնելէ. և Նոր օրէնքներուն համեմատ, երկու տարիէն, 1915 Յունուարէն սկսեալ, (Home Rule) պիտի արձանագրուի անգղիական օրինաբքին մէջ, և Իււանաուն իր բաղմաժամանակեայ զիւցադնական ջանքերը յաջողութեամբ պսակուած պիտի տեսնէ. և Մեծին Օ'Գոնէլի ոսկեղինիկ երազը պիտի իրագործուի:

Նուէլ Գերապայծառը որ անցեալ տարի Ս. Տոմինիկոս կղզեայն Հանրապետութեան նախագահ ընտրուեցաւ, ամբողջ Ժողովուրդին միաձայն հաւանութեամբ, կը հաւաստուի թէ խաղաղ և երջանիկ վիճակի մը մէջ դրեր է նոյն կղզին, որ իրմէ առաջ զանազան կուսակցութիւններուն անընդհատ կռիւներուն խաղաղիկ ըլլալով մասնուած էր կործանարար խռովութեան և թշուառութեան: Շատ աշխարհական իշխաններ ջանացեր էին վերջ տալ կղզեայն աղետաբեր երկպառակութեան, բայց չէին կրցեր. միայն Եպիսկոպոսը ձեռնհաս էր այդ հաշտութեան, խաղաղութեան գործը ի գլուխ հանելու, ուստի Ժողովուրդը զանիկայ բարձրացուց նախագահութեան պատւոյն և յաջողեցաւ: Այս գեղեցիկ դէպքը ակնհերեցող կուսայ թէ ո'րքան մեծ դեր կրնան ունենալ եպիսկոպոսները և քահանաները պետութեանց անգործութեան և բարգաւաճման գործին մէջ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Տէր Կոմիսսա Բահանայ	129
Քարոզ Յիսուսի չարչարանաց վրայ	434
Գաթլիքիլիյն քերագրքը	134
Ս. Աւետարանի մեկնութիւն	135
Հրաւէր սիրոյ	137
Եօթնեակ Քրիստոնէի	138
Հաղորդակցութիւն յասուածայինս	139
Գաթլիք Մեղիւկի Էսասլարը	141
Տեղեկագրական	142

ԱՐՏՕՆԱՏԷՐ


ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՂԻՊԱՇԵԱՆ

Քպս. Կ. Արձագանգ Շաքաբաքերի, Բերա, Պալամ փողոց քիւ Ծ, Կ. Պոլիս



ԲԱԺԱՆՊՐԵԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Գուրգիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դնկ.:— Արտասահման՝ տար. Եր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:
ՀԱՍՑԷ.— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Bâram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն ղրկուած ո եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքի մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու զանեկանի նամակադրո՞ւմ ի միասին լրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի հոյս եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրապարակներ, քարտեր, քարտ-անտերներ, մանագրներ, եւն., եւն.: Գիները ամենայնի կերպով ամառ են: Գեղեցկագիտական ճանաչի եւ տպագրական մատուցեան կողմանէ յաճախորդները անտարակոյս գոն ալիսի մնան:

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարական Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դնկն.:
